

Լաւն ու բարիք, յարաբերական ըլլալու պարագային, կը դառնայ սահմանափակ եւ ոչ բոլորին կողմէ ընդունուած կամ նոյն ձեւով ընկալուած: Այս պատճառով ալ, *բարոյագիտական յարաբերապաշտութիւնը*⁽⁵⁵⁾ միշտ մերժուած է:

Կանտ, լուծելով այս բարդ հարցը ու հեռանալով յարաբերապաշտութենէն, *լաւն ու բարիք*ն կու տայ բացարձակ իմաստ, որ եթէ բոլորը հարկադրուած չըլլան զայն ընդունիլ, բայց անոնք գոնէ կարենան (կարելիութիւն ունենան) զայն ընդունիլ: Կանտի այս գաղափարը կ'ապաւինի մարդու բանականութեան եւ ընդհանրական բարոյական գիտակցութեան:

Կանտ կը հեռանայ նաեւ բարոյական պայմանագրային տեսութենէն (Contractarianism), ուր փոխադարձ համաձայնութիւն մը կայ («ես պայմանագրութեան կանոնները միայն կը յարգեմ, որովհետեւ կ'ուզեմ, որ իմ հանդէպ ալ նոյն կանոնները կիրարկուին») ... մինչ Կանտի համար կանոնները պէտք է յարգուին, պարզապէս՝ որովհետեւ անոնք ինքնին *լաւ ու բարի* են:

2. Անհատական ինքնավարութիւնը.-

Նախ հարց տանք, թէ ինչո՞ւ բարոյագիտութեան տեսութեան մը համոզիչ հիմնաւորում տալու համար, պէտք է կամենանք՝ *լաւն ու բարիք* սկզբունքը ընդունիլ: Այս հարցադրման մէջ կը շեշտուի «կամենալ»ու արարքը, որ ունի իր պատճառները եւ շարժառիթները:

Եթէ բացայայտել ուզենք *լաւն ու բարիք* ընդունման կամենալու **պատճառները**, պիտի տեսնենք, որ *լաւն ու բարիք* սկզբունքը ընկերութեան մը մէջ կը յառաջանայ, մէկ կողմէ՝ հեղինակութիւններէ ազդուած (վերանցական, անդրանցական – Transcendental – ձեւով) իսկ միւս կողմէ՝ միջենթակայական – Intersubjective – հետաքրքրութիւններէն բխած (փոխադարձ պահանջքի մը ձեւով): Այստեղ յիշելու է, որ Կանտի պարագային, վերոյիշեալ բարձր հեղինակութիւնը կը փոխարինուի՝ բանականութեամբ:

Իսկ եթէ բացայայտել ուզենք *լաւն ու բարիք* անհատին կողմէ ընդունման կամենալու **շարժառիթները**, նախ պէտք է հաստատել, որ խնդրոյ առարկայ անհատը ընդհանրապէս կ'ուզէ՞ բարոյական հասարակութեան մը անդամ դառնալ, որ *լաւն ու բարիք* որպէս սկզբունք կ'ընդունի: Միայն ընդունելու պարագային է, որ կը յայտնաբերուի *անհատական ինքնավարութիւնը* կամ *ազատութիւնը*:

Անհատ մը, բարոյական գիտակցութեան պակասի պատճառով, կրնայ *լաւն ու բարիք* սկզբունքը չընդունիլ եւ քաշուիլ պայմանագրային տեսութեան սահմաններէն ներս: Նմանօրինակ անհատի մը, բարոյականութեան մասին ընդհանրապէս կամ Կանտի բարոյագիտութեան տեսութեան ու *լաւն ու բարիք*

(55) **Յարաբերապաշտութեան** (Relativism) մասին տե՛ս նաեւ Բարոյականութեան հիմնաւորումը, Մաս – 4, Էջ 142 եւ Բարոյականութեան քննադատութիւնը, Մաս – 6, Էջ 233: